

մեղաւորաց — դպած հացը եւ անոր «թեր-
ըմբեալ» գինին, ջուրը, կաթն ու թանն
անգամ: Իսկ մսոյ, պանրի եւ նոյնպիսեաց
«զըմբոնեալն՝» այս ինքն բոնած մասը՝
կտրեն ձգեն, կ'ըսէ, եւ մնացորդը լուա-
լով ուտեն: Այս բոլորը քրիստոնէից պա-
տրաստածներն են: Իսկ գալով բուն իսկ
այլազգեաց ունեցածներուն, զանոնք բո-
լորովին անուտելի կը քարոզէ, ի բաց
առեալ փեճեկաւոր պտուղները, ընկոյզ,
նուռն եւ այլք, ու դեղորայքը (ԺԱ): Ա-
նոնց կոխած գինին բոլորովին խորշելի
է. իսկ եթէ խաղողը միայն քաղած են
եւ կամ կիսակեր ողկոյզ մը ձգած անոր
մէջ, այդ գինիէն քահանայք խմելու չեն,
եւ ոչ պատարագին գործածելի (ԺԲ): Կա-
րելի է անոցմէ ցորեան գնել, բայց ա-
լիւր ոչ, բաց ի ստիպող հարկէ (ԺԳ): —
Այս արգելմանց մէջ եւս անմասն չեն
Բարսղի հայածին կանոնք, որ անօրէն
մարդոց «յազեալ» կամ կիսակեր կերա-
կուրը կը հրամայեն շներու ձգել (ՃԶԳ):

Վերջապէս պիղծ էին այլազգեաց ա-
նօթներն ալ: Անոնց գործածած ամանը
մեր ծառայութեան առնուլ՝ «ամենեւին ոչ
է մարթ», կ'ըսէ Ալաւկայ որդին: Նոյն-
պէս մեր ամանն՝ ուր անոնց կերակրէն
մտած է, «խոտելի է ամենեւին»: Եթէ